Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովում փորձագետ ներգրավելու մասին

Աշխատանքների համառոտ նկարագրությունը՝

Փորձագետը իրականացնելու է ծրագրով նախատեսված աշխատանքներ, մասնավորապես՝

1. Աջակցել նախագահին Հանձնաժողովի աշխատանքային ծրագրերի կազմման և հանձնարարականների ներկայացման գործում,
2. աջակցել միջազգային դոնորների, ստորաբաժանման ղեկավարների հետ աշխատանքային քննարկումների և խորհրդակցությունների, գործողությունների պլանավորմանը և իրականացմանը,
3. գրանցել Նախագահի բացակայության ժամանակ ստացվող հեռախոսազանգերը, տեղեկատվությունը և իրազեկել դրանց բովանդակության մասին, փոխանցել և ընդունել տեղեկատվություն /էլեկտրոնային նամակներ, հեռախոսագրեր և այլն/, ինչպես նաև ղեկավարին ժամանակին տեղեկացնել կապի միջոցներով ստացված տեղեկատվության մասին,
4. աջակցել օժանդակող մասնագիտական գործառույթ իրականացնող ստորաբաժանումների գործունեության պլանավորմանը, իրականացման ժամանակ տեղեկությունների հավաքագրմանը,
5. աջակցել մասնագիտական գործառույթ իրականացնող ստորաբաժանումների և նախագահի իրավական հարցերի շուրջ քննարկումներին,
6. իրականացնել թեմատիկ հետազոտությունների իրավական հարցերի աջակցությունը,
7. իրականացնել համապատասխան թեմատիկ ուսումնասիրություններ, վերլուծություններ,
8. մասնակցել միջազգային գործընկերների հետ համագործակցության ծրագրերի կազմմանը և իրականացմանը,
9. մասնակցել Հանձնաժողովի նիստերին և աշխատանքային քննարկումներին:

Փորձագետներ ներգրավելու ժամկետը՝ մինչև երկու տարի:

1. Փորձագետի աշխատավարձը կազմում է՝ 256 623 (երկու հարյուր հիսունվեց հազար վեց հարյուր քսաներեք) ՀՀ դրամ:

Փորձագետների պարտականությունները՝

1. բարեխղճորեն կատարել աշխատանքային պայմանագրով ստանձնած աշխատանքները.
2. սահմանված ժամկետներում կազմել և ներկայացնել փորձագետի աշխատանքների ծրագրով նախատեսված հաշվետվությունները, վերլուծություններն ու տեղեկանքները.
3. պահպանել համապատասխան մարմնում սահմանված ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը.
4. պահպանել աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման միջոցները.
5. իրականացնել ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով և աշխատանքային պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականությունները.

Փորձագետներին ներկայացվող պահանջները՝

1) Բարձրագույն կրթություն.
2) Ծրագրերի համակարգման կամ միջազգային ծրագրերի համակարգման, ղեկավարման կամ միջազգային/տեղական կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում աշխատանքի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.
3) Անգլերեն լեզվի ազատ տիրապետում.
4) իր լիազորությունների հետ կապված անհրաժեշտ հմտություններ.
5) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում Հանձնաժողովի գլխավոր քարտուղարի անունով (**դիմումի ձևը կցվում է**).
- կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթուղթ (փաստաթղթեր).
- աշխատանքային գրքույկ (գրքույկի բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք/ներ կամ այլ փաստաթուղթ/եր համապատասխան մարմնից/ներից).
- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայական, կամ համապատասխան տեղեկանք.
- մեկ լուսանկար՝ 3 x 4 սմ չափսի.
- անձնագիր կամ նույնականացման քարտ.
- սոցիալական քարտ կամ հանրային ծառայության համարանիշ ունենալու մասին տեղեկանք.
- ինքնակենսագրական.

- հայտարարություն ՀՀ կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի N 878-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետով նախատեսված սահմանափակումների բացակայության մասին (**հայտարարության ձևը կցվում է**):

Պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից ընտրություն կատարելու եղանակներն են՝

- դիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրություն.
- ինքնակենսագրականների ուսումնասիրություն:

Քաղաքացիները փաստաթղթերը ներկայացնում են պատճենների հետ միաժամանակ՝ էլեկտրոնային փոստի միջոցով կամ անձամբ առձեռն:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 22 փետրվարի 2022թ.

Փաստաթղթերն ընդունվում են միայն աշխատանքային օրերին՝ ժամը 10.00-ից մինչև 00.00-ը:

Աշխատանքի վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15
հեռ.՝ 012-77-77-24, էլեկտրոնային փոստի հասցե՝ hr.cpcarmenia@gmail.com